

**Ինչպես վարվեք, եթե հայտնվել եք
թրաֆիքինգի զոհի
կարգավիճակում**

- փորձեք կապվել Ձեր բարեկամների հետ և նրանց միջոցով՝ Շայաստանում գործող կազմակերպությունների հետ
- հնարավորություն գտեք զանգահարել ոստիկանություն (մի վախեցեք, անձամբ դիմեք ոստիկանությանը)
- փողոցում մոտեցեք մոտակա ոստիկանին կամ ոստիկանական մեքենային և օգնություն խնդրեք
- մեքենայում գտնվելիս, տեսնելով ոստիկան, առանց վարանելու բացեք դուռը, ուշադրություն զրավելու համար և օգնություն խնդրեք կանչել (անգամ մեքենայի ընթացքի ժամանակ)
- հայրենիքում դիմեք ոստիկանություն զրավոր դիմումով, որում մանրամասն նկարագրեք Ձեզ հետ կատարվածը: Դա հնարավորություն կտա ոչ միայն պատժել հավաքագրողներին և շահագործողին, այլև հիմք կհանդիսանա դատական կարգով հատուցելու նյութական վնասները
- մի խուսափեք ոստիկանություն դիմելուց. ամեն մի չբացահայտած դեպք նպաստում է նոր զոհերի առաջացմանը
- դիմեք կառավարական և հասարակական կազմակերպություններին՝ աջակցության համար

**Մենք գործում ենք
մարդկանց առևտրից
տուժածներին
օգնելու նպատակով**

Մենք Ձեզ կօգնենք՝
արդյունավետ և գաղտնի

ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐՆ ԵՆ՝

Խորհրդատվություն
080 080 801

անվճար հեռախոսահամարի միջոցով

Նպաստում ենք տուն
անվտանգ վերադարձին

Իրավական խորհրդատվություն
և օգնություն

Շոգեբանական աջակցություն

Սոցիալական օգնություն

**Ինչ անեք,
որ չդառնաք
թրաֆիքինգի**

(մարդկանց շահագործման)

զոհ

- մեկնեք արտերկիր՝ ունենալով օրինական կարգով կնքված աշխատանքային պայմանագիր
- ձեզ հետ ունեցեք անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները
- մեկնելուց առաջ ձեր բարեկամներին թողեք գործատուի և հավաքագրողի տվյալները, փաստաթղթերի պատճենները, ֆոտոնկարը
- նախքան մեկնելը փորձեք հեռախոսով կապվել արտերկրում գտնվող գործատուի հետ և ձշտեք աշխատանքի և ապրելու հետ կապված բոլոր հանգամանքները (պայմանները)
- տվյալ երկրի դեսպանատան միջոցով պարզեք՝ արդյո՞ք իրականում գոյություն ունի աշխատանքն առաջարկող կազմակերպությունը
- սովորեք մեկնելու երկրի լեզուն
- ունեցե՛կ մեկնելու երկրում ՇՇ դեսպանատան հասցեն և հեռախոսահամարը

- հիշեք՝ տուրիստական վիզան աշխատելու հնարավորություն չի տալիս
- անձնագիրը պետք է վավեր լինի արտասահմանում գտնվելու նախատեսված ամբողջ ժամանակահատվածում
- անձամբ կատարեք ժամանակավոր գրանցման և աշխատանքի թույլտվության ձևակերպելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները
- մի վստահեք ձեր անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթղթերը այլ անձի

Թրաֆիքինգի ենթարկվելու հավանականությունը ավելացնող գործոնները

- մեկնելու երկրի լեզվին չտիրապետելը
- գործատուն (հավաքագրողը) իր վրա է վերցնում փաստաթղթերի և վիզայի ձևակերպման ծախսերը՝ ապագա աշխատավարձից պարտքը մարելու պայմանով
- գործատուն (հավաքագրողը) իր վրա է վերցնում ձանապարհածախսը
- գործատուն (հավաքագրողը) առաջարկում է սահմանի հատումը կատարել կեղծ փաստաթղթերով կամ ուրիշի փաստաթղթերով
- արտերկիր մեկնելն առանց ստորագրված աշխատանքային պայմանագրի

Թրաֆիքինգի ենթարկված լինելու մասին վկայող ցուցիչներ

- սեփական անձնագիր կամ անձը նույնացնող այլ փաստաթղթեր չունենալը, քանի որ փաստաթղթերը պահվում են այլ անձանց մոտ
- անձը նույնացնող կամ ձամփորդական կեղծ փաստաթղթեր ունենալը
- արտերկրում առանց օրինական գրանցման գտնվելը
- արտերկրում առանց պաշտոնական թույլտվության աշխատելը
- կատարած աշխատանքի դիմաց պայմանավորված աշխատավարձը չստանալը
- պայմանավորված աշխատավարձը մասամբ ստանալը կամ բոլորովին չստանալը
- առանց գործատուի թույլտվության աշխատանքի վայրը կամ բնակվելու վայրը լքելու իրավունք չունենալը՝ թեկուզ ժամանակավոր անձնական գործերով զբաղվելու համար
- գործատուին թողնելու և ուրիշ գործատուի մոտ աշխատանքի անցնելու հնարավորություն չունենալը
- աշխատանքի տեղում բնակվելը (քնելը)

- տվյալ երկրի Աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատաժամերի մշտական գերազանցումով աշխատելը
- բժշկական օգնության ստանալու հնարավորություն չունենալը
- Ձեր, Ձեր ընտանիքի կամ մերձավորների հանդեպ բռնության սպառնալիքներ ստանալը՝ հնազանդությունն ապահովելու համար
- օրենքով չսահմանված կարգապահական միջոցների (ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, տուգանքների) կիրառման զոհը դառնալը
- Ձեր ընտանիքի կամ Ձեր անմիջական շրջապատից դուրս մարդկանց հետ շփումների համար սահմանափակ հնարավորություններ ունենալը
- չքավորության կամ աղքատության սահմանագծից ցածր պայմաններում ապրելը

Եթե վերը նշված կետերից 5-ը և ավելին համապատասխանում են ձեր իրավիճակին, ապա Դուք թրաֆիքինգի զոհ եք

Հիշեք՝ Ձեր նկատմամբ հանցագործություն է կատարվել Դուք տուժող եք, ոչ թե հանցագործ